ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

ՕՐԱԿԱՐԳ

1. Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգումը որպես հաշմանդամության սահմանման և ծառայությունների պլանավորման գործիք.

2. Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում Աջողջապահության համաշխարհային կազմակերպության հաշմանդամության գնահատման գործիքներով իրականացված հետազոտության արդյունքների ներկայացում.

3. Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF-CY) սկզբունքներով և գործիքներով երեխաների կարողությունների գնահատման մեթոդները ՀՀ կրթության բնագավառում.

4. <<Անձի բազմակողմանի գնահատման՝ ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակրագման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման>> հայեցակարգի նախագծի ներկայացում.

Մասնակցեցին՝

Ա. Ասատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամները՝

Ջ.Բաղդասարյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Մ.Մկրտչյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Հ.Աբրահամյան - Հայաստանի հաշմանդամների <<Փյունիկ>> միության նախագահ

Ա.Ալավերդյան - <<Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության<<ՈՒՆիսոն>> հասարակական կազմակերպության նախագահ

Ս.Թադևոսյան - <<Հույսի կամուրջ>> հաշմանդամ երեխաների և

երիտասարդների իրավունքների պաշտպանություն>>
հասարակական կազմակերպության նախագահ

Լ. Ներսիսյան - <<Աստղիկ>> հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա>>
հասարակական կազմակերպության նախագահ

Ս.Օհանյան - <<Հաշմանդամների <<Փարոս>> կրթության և մշակույթի
զարգացման կենտրոն>> հասարակական կազմակերպության
նախագահ

Ս.Մաղաքյան - <<Լիարժեք կյանք>> հասարակական կազմակերպության
նախագահ

Գ.Գրիգորյան - <<Հայաստանի խուլերի միավորում>> հասարակական
կազմակերպության նախագահ

Ա. Հակոբյան - <<Հայաստանի կույրերի միավորում>> հասարակական
կազմակերպության նախագահ

Ա.Կեսոյան - ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի
նախարարության աշխատակազմի հաշմանդամների և
տարեցների հիմնահարցերի վարչության պետ
(հանձնաժողովի քարտուղար)

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին մասնակցել են՝

Ռ.Բալասանովա ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
սոցիալական պաշտպանության և առողջապահական
բնագավառներում բյուջետային ընթացիկ ծախսերի
ֆինանսական ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ
նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանի առաջարկով

Ռ.Յուզբաշյան - ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի
առողջապահական ծրագրերի և որակի կառավարման
վարչության, առողջապահական ծրագրերի բաժնի պետ
նախարարի առաջին տեղակալ Վ.Պողոսյանի առաջարկով

Հրավիրվածներ՝

Հ. Հակոբյան	ՀՀ Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ռ. Սիմեոնսոն	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետ, Հյուսիսային Կառոլինայի համալսարանի հոգեբանության և վաղ մանկական կրթության բաժնի պրոֆեսոր, WHO ICF-CY աշխատանքային խմբի ղեկավար
Ա.Սիմոնյան	ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության պետի տեղակալ
Է.Գրիգորյան	ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության իրավական ապահովման բաժնի պետ
Ն.Մնացականյան	ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության վերափորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ
Հ.Պողոսյան	Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն
Ա.Մինասյան	ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական աջակցության վարչության պետ
Լ.Ղազարյան	ՀՀ ԱՍՀՆ Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Թ.Ավետիսյան	ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Հ.Մուրադյան	ՀՀ ԱՍՀՆ Վերլուծության և մոնրթորինգի վարչության պետ
Մ.Երիցյան	<<Առբես>> կենտրոնի վերականգնողաբան
Վ.Կատինյան	Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի տնօրեն
Ս.Ժամկոչյան	Վատ լսող երեխաների մայրերի <<Հավատ>> հասարակական կազմակերպության նախագահ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստին բացման խոսքով հանդես եկան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հանձնաժողովի նախագահ Արտեմ Ասատրյանը և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան ներկայացուցիչ Հենրիետ Ահրենսը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը և նշեց, որ օրակարգում ընդգրկված հարցերը արդիական են և առաջիկա կարճ ժամանակահատվածում լուծումներ են պահանջում:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի փորձագետ, Հյուսիսային Կառոլինայի համալսարանի հոգեբանության և վաղ մանկական կրթության բաժնի պրոֆեսոր, WHO ICF-CY աշխատանքային խմբի ղեկավար Ռունե Սիմեոնսոնը:

Նա ներկայացրեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգումը՝ որպես հաշմանդամության սահմանման և ծառայությունների պլանավորման գործիք, ինչպես նաև դիտարկումներ կատարեց հայեցակարգի նախագծի վերաբերյալ՝ ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF-ի) գաղափարախոսության տեսանկյունից: Պարոն Ռ. Սիմեոնսոնը հայեցակարգը մշակող աշխատանքային խմբի հետ աշխատում է երկար ժամանակ, նա իր դիտարկումներն է ներկայացրել նաև «Անձի պահպանված աշխատունակության աստիճանի որոշման հիման վրա հաշմանդամության սահմանման մոդելին անցնելու հայեցակարգի» վերաբերյալ, պարզաբանելով այդ մոդելից բխող ռիսկերը և խնդիրները: Մինչ նիստը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ աշխատանքային խումբը մասնակցեց մեկօրյա սեմինարի՝ պարոն Ռ. Սիմեոնսոնի հետ քննարկելով հայեցակարգային մոտեցումները:

Պարոն Հ.Հակոբյանը հարց բարձրացրեց, թե որ երկրներում է կիրառվում ICF-ը և որ երկրների փորձը կարելի է կիրառել Հայաստանի Հանրապետությունում:

Ռ.Սիմեոնսոնը նշեց, որ Հայաստանում ICF մոդելի կիրառման համար ամենալավ օրինակը Թայվանն է: Նա համառոտ ներկայացրեց նաև Թայվանի փորձը:

Այդ ծրագրերն իրականացվել են Իտալիայում, Գերմանիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Նորվեգիայում, Իսպանիայում, Չեխիայում, Իռլանդիայում, Սլովենիայում, Ռումինիայում, Պորտուգալիայում, Լյուքսենբուրգում, Ավստրիայում, Ֆինլանդիայում, Հունգարիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Շվեդիայում, Լեհաստանում, և այլն: Այդ երկրներում ՖՄԴ-ը լայնորեն կիրառվում է սոցիալական քաղաքականության մշակման, խտրականության դեմ օրենքների մշակման և հաշմանդամության գնահատման համար: ՖՄԴ հիմքով իրականացվում են առողջապահական և հաշմանդամության գնահատման և ազգային և միջազգային հետազոտություններ:

Հարց բարձրացրեց նաև պարոն Լ.Ներսիսյանը, նշելով, որ ներկայացված մոդելում նշված չէ հաշմանդամ երեխաների ծնողների կամ նրանց խնամողների մասին տեղեկատվություն:

Ռ.Սիմեոնսոնը նշեց, որ երեխաների համար մշակված է նոր տարբերակ՝ ICF-CY, որտեղ առանձին գլուխներում տրված են երեխայի և ծնողի մասին

տեղեկատվություն: Առանձնահատուկ ուշադրություն է հրավիրված նաև երեխաների կրթությանը, ընտանիքում նրանց լիարժեք կյանքի կազմակերպմանը:

Ռ.Սիմեոնսոնին հարցով դիմեց տիկին Ռ. Յուզբաշյանը՝

Արդյոք ICF-CY-ը հնարավորություն է տալիս ծառայությունների մատուցման կամ հաշմանդամության նպաստի հարցը քննարկելիս տարբերակում դնել ըստ երեխայի ընտանիքի ֆինանսական ապահովության:

Ռ.Սիմեոնսոնը նշեց, որ ICF-ը թույլ է տալիս, որպեսզի երկրներն իրենք որոշեն հաշմանդամության շեմը և ըստ այդմ որոշեն ծառայությունների տեսակները:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

Զեկույցով հանդես եկավ USAID/PRIP, Կարողությունների զարգացման թիմի ղեկավար տիկին Հ.Ղուկասյանը: Նա ներկայացրեց Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշմանդամության գնահատման գործիքներով իրականացված հետազոտության արդյունքները:

Պարոն Հ.Հակոբյանը հարց բարձրացրեց՝ արդյոք Հայաստանի Հանրապետությունում անձին հաշմանդամ են ճանաչում բժշկասոցիալական, թե առողջապահական սկզբունքներով: Հաշմանդամություն որոշելու համար Հայաստանի Հանրապետությունում արդյոք ICF-ի մոդելը անհրաժեշտ է կիրառել թե ոչ, այսինքն՝ <<այո>> այս մոդելին, թե ոչ:

Տիկին Հ.Ղուկասյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ կիրառվում է բժշկա-առողջապահական սկզբունքը: Մոդելի կիրառելը նպատակահարմար է հաշմանդամություն որոշելու համար:

Արտահայտվեցին՝ Ա.Ասատրյանը, Ջ.Բաղդասարյանը, Ս.Թադևոսյանը

Պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ հայեցակարգի քննարկման փուլում պետք է ճիշտ սահմանել խնդիրները, տալ խնդիրների լուծումը և քայլերի հաջորդականությունը:

Տիկին Ջ.Բաղդասարյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունում մոդելի ներդրումը ճիշտ է: Նա նաև պարզաբանեց, որ գործող մոդելը հնարավորություն չի տալիս սահմանել մինչև 18 տարեկան երեխաների հաշմանդամությունն ըստ ծանրության աստիճանների: Նրանց համար սահմանվում է «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և նրանք ստանում են նույն ծառայությունները, անկախ այն բանից դրա կարիքն ունեն, թե ոչ: ICF-ը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անհատի համար, ելնելով նրա կարիքներից, որոշել և տրամադրել հասցեական ծառայություններ, որը կնպաստի նրանց կարողությունների հզորացմանը:

Տիկին Ս. Թադևոսյանը նշեց, որ ICF-ը հիմք է հանդիսանում երկրներում հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման համար, այն անձին դիտարկում է ոչ թե առողջության կամ առողջական խնդիրների տեսանկյունից, այլ անձի ակտիվության և մասնակցության: Նա նույնպես նկատեց, որ ICF-ը հնարավորություն է տալիս երկրին որոշելու հաշմանդամության շեմը:

Երրորդ հարցի վերաբերյալ

Զեկույցով հանդես եկավ Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի տնօրեն տիկին Վ.Կատինյանը: Նա ներկայացրեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ICF-CY) սկզբունքներով և գործիքներով երեխաների կարողությունների գնահատման մեթոդները ՀՀ կրթության բնագավառում:

Պարոն Լ.Ներսիսյանը հարց բարձրացրեց, արդյոք 0-3 տարեկան երեխաների կարողությունները գնահատվում են:

Տիկին Վ.Կատինյանը նշեց, որ մինչև 3 տարեկանը երեխան չի համարվում կրթության տարիք, հետևաբար կենտրոնը նրանց կրթական կարիքի գնահատում չի իրականացնում: 0-3 տարեկան երեխաների համար մշակված է հարցաշար, որը լրացվում է ծնողի կողմից:

Չորրորդ հարցի վերաբերյալ

Զեկույցով հանդես եկան ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ Ա.Հակոբյանը և ՀՀ ԲՍՓ գործակալության պետի տեղակալ Ա.Սիմոնյանը:

Ներկայացրեցին «Անձի բազմակողմանի գնահատման՝ ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգի նախագծը:

Պարոն Հ. Հակոբյանի հարցին, թե այսօր Հայաստանում անձին հաշմանդամ ճանաչելու չափանիշների հիմքում դրված է սոցիալական, թե բժշկական գործոնը, տիկին Ա. Սիմոնյանը պատասխանեց, որ հիմքում դրված է բժշկասոցիալական գործոնը, անձի առողջության խաթարման, վնասվածքի կամ հիվանդության հետևանքով առաջացած կենսագործունեության սահմանափակման աստիճանի որոշումը:

Ամփոփելով օրակարգում ներկայացված հարցերը, հանձնաժողովի նախագահը հանձնարարեց 10 օրյա ժամկետում, լրամշակել հայեցակարգի նախագիծը, ապա ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների կարծիքին:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ՝ **Ա.Ասատրյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Կեսոյան**